

ՀՏԴ 338

**ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԹՎԵՐԸ  
ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

**ՎԻԼԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա*

Հողվածում անդրադարձ է կատարվում կոռուպցիայի ընկալման, կյանքի որակի, տնտեսական ազատության, մարդկային զարգացման, աղքատության, համաշխարհային մրցունակության համաթվերին և այլն: Այս համաթվերի վերլուծության արդյունքում մենք կարող ենք արձանագրել, որ շատ դեպքերում երկրի տնտեսության զարգացումը պայմանավորված է համաշխարհային տնտեսության մեջ վերջինիս ունեցած վարկանիշով: Ավելի լավ արդյունքների հասնելու համար պետական կառավարման մարմինները և, հատկապես, այն հաստատությունները, որոնք իրականացնում են բարեփոխումներ, պետք է ուսումնասիրեն միջազգային փորձը և ձգտեն հասնեն վարկանիշի բարելավման՝ համակարգային և կառուցվածքային բարեփոխումների միջոցով:

**Բանալի բառեր.** կոռուպցիայի ընկալում, կյանքի որակ, տնտեսական ազատություն, մարդկային զարգացում, աղքատության համաթիվ, համաշխարհային մրցունակություն, ձեռնարկատիրական միջավայրի գնահատում:

Տնտեսության վերաբերյալ կարելի է պատկերացում կազմել մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների համակարգում ընդգրկված ցուցանիշների միջոցով, սակայն կարևոր նշանակություն պետք է տալ նաև համաշխարհային կազմակերպությունների կողմից տնտեսությունների դասակարգման ցուցանիշներին և վարկանիշավորման մեթոդաբանական հարցերին, քանի որ վերջին ժամանակներում՝ դրանք լուրջ ուղղվածություն են հաղորդում անգամ ներդրումային հոսքերին:

Տարբեր վերազգային կորպորացիաներ՝ իրենց ներդրումային քաղաքականության տրամաբանությունը կառուցում են, ոչ միայն իրենց նախասիրությունների, այլ նաև տվյալ երկրի առանձին համաթվերով զբաղեցրած դիրքի, ունեցած վարկանիշի վրա: Մյուս կողմից, ինչքան լուրջ մեթոդաբանական հիմքերի վրա է հաշվարկվում տվյալ համաթիվը կամ ինդեքսը, այնքան ավելի մեծ վստահություն է վայելում:

Դա է նաև պատճառներից մեկը, որ երկրները միմյանց միջև գտնվում են մրցակցային պայքարում՝ փորձելով բարելավել իրենց դիրքերն ու զբա-

ղեցնել ավելի բարձր վարկանիշ, իսկ մյուս կողմից ակամայից իրականացնում են նաև բարեփոխումներ, բարելավում ենթակառուցվածքները, գործարար, ներդրումային և մրցակցային միջավայրը և այլն:

Կոռուպցիայի ընկալման համաթիվը (Corruption Perceptions Index) [1, pp. 2-3] մշակվել է Transparency International կազմակերպության կողմից և չափում է առանձին պետությունների պետական հատվածում կոռուպցիայի ընկալման մակարդակը ու հանդիսանում է բաղադրյալ համաթիվ, որը հիմնվում է հարցումների տվյալների վրա, որոնք անցկացվում են փորձագետների և գործարար շրջանակներում: Փորձագետներին տրվող հարցերն առնչվում են հետևյալ թեմաներին՝ պետական պաշտոնյա անձանց կաշառելուն, պետական պատվերների իրականացման ոչ լիարժեքությանը, պետական միջոցների հափշտակմանը, հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետությանը, հետազոտվում են նաև վարչական և քաղաքական կոռուպցիաները:

Համաթիվը ռանգավորվում է 180 երկրների համար՝ 0-100 բալային համակարգով, որտեղ 0-ն նշանակում է որպես կոռուպցիայի ընկալման ամենաբարձր մակարդակ, իսկ 100-ը՝ ամենացածր:

Այս համաթիվով Հայաստանը 2019թ.-ի զեկույցում զբաղեցրել է 77-րդ հորիզոնականը, իսկ մոտ 10 տարի առաջ 110-րդ տեղում էր 180 երկրների շարքում: Կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումները տալիս են իրենց դրական արդյունքը, սակայն 42 միավորը դեռևս բավականին ցածր է: Հարևան երկրներից առավել բարեհաջող են Վրաստանի դիրքերը՝ 56-րդ, իսկ առավել վատ դիրքում է գտնվում Ադրբեյջանը՝ 126-րդը, Թուրքիան՝ 91-րդ, իսկ Ռուսաստանը՝ 137-րդ:

Այս համակարգում ամենալավ փորձ ունեցող երկրներն են՝ Դանիան, Նոր Զելանդիան, Ֆինլանդիան, Սինգապուրը: Այստեղ պետք է հասնել նրան, որ առանձին գործընթացների և ընթացակարգերի իրագործման և կազմակերպման հարցերում նվազագույնի հասցվի մարդկային շփման շրջանակը, որի համար կարևորվում են ժամանակակից նորագույն տեխնոլոգիաների հիման վրա գրանցումների, վճարումների, ինչպես նաև հետագա սպասարկման գործընթացների կազմակերպումը: Այս երկրները E-government\* համակարգի բաղադրատարրերով հասել մեծ արդյունքների և պետական կառավարման մարմիններ և գործարար աշխարհի էլեկտրոնային դաշտում շփման շրջանակը գրեթե հասցրել են չկոռուպացված մակարդակի:

\* E-government՝ էլեկտրոնային կառավարություն

Ինչ վերաբերում է Կաշառք վճարողների համաթվին, այսինքն՝ կոռուպցիայի ամենալայն ու տարածված ձևին, ապա այստեղ 2011թ.-ից հետո զեկույցներ գրեթե չեն հրապարակվել, ըստ վերջին զեկույցի առաջին տեղում է գտնվել Նիդերլանդները, իսկ 28-րդ հորիզոնականում՝ Ռուսաստանը [2, p. 5]:

Մարդկության պատմության մեջ միշտ էլ բավականին լուրջ մարտահրավեր է եղել բարեկեցության կամ որակյալ կյանքի հիմնահարցը: Այս խնդրին փորձում են լուծում տալ փորձագետները մեկ այլ՝ Կյանքի որակի համաթվի (Quality of living indexes) միջոցով, այն հայտնի է նաև, որպես Մերսերի (Mercer) կյանքի որակի համաթիվ [3]: Այն իր մեջ ընդգրկում է մի շարք հիմնական գործոններ, որոնք միավորված են տարբեր կատեգորիաներում.

- քաղաքական և սոցիալական միջավայրը,
- տնտեսական իրավիճակը,
- մշակույթը,
- առողջապահությունը և բնապահպանությունը,
- կրթությունը,
- կոմունալ և տրանսպորտային ծառայությունները,
- հանգիստը,
- ազգային սպառման ապրանքները,
- բնակարանային տնտեսությունը,
- շրջակա միջավայրը:

Այս համաթիվը հաշվարկվում է աշխարհի 350 քաղաքների համար, սակայն արդյունքային վարկանիշների մեջ մտնում են միայն 231 քաղաքներ: 2019-ին 1-ին և 2-րդ տեղերը պատկանում էին Վիեննային (Ավստրիա) և Շվեյցարիայի Ցյուրիխին, իսկ 3-րդ տեղը՝ Վանկուվերին (Կանադա): Թբիլիսին գտնվել էր 187-րդ, իսկ Մոսկվան 167-րդ տեղում:

2019-ին Երևանը զբաղեցրել է 170-րդ հորիզոնականը: Կյանքի որակի տեսանկյունից 50 առաջատար քաղաքները հիմնականում եվրոպական երկրներում են, միայն մի քանի քաղաքներ, որոնք առաջատար են, գտնվում են Կանադայում, Ավստրալիայում և ԱՄՆ-ում, այսինքն՝ կարելի է նաև եզրակացնել, որ կյանքի որակը, որպես այդպիսին, ամենաբարձրն է Եվրոպայում: Սակայն աշխարհում այժմ ընթանում է «Խելացի քաղաքներ» ստեղծելու մրցավազքը, մի շարք երկրներ իրենց քաղաքների կառավարման համակարգում ինտենսիվ կերպով ներդնում են արհեստական բանականության միջոցով կառավարման մոդելներ, անցում է կատարվում նաև «թվային ժողովրդավարության» կամ համատարած թվային վերահսկողության համակարգերի: Սա նշանակում է, որ ապագայում քաղաքային տնտեսության ենթակառուցվածքների զարգացման համար ներդրում են կատարվելու հենց նման տեխնոլոգիաների բնագավառում, իսկ

կյանքի որակը գնահատվելու է ըստ նմանատիպ ենթակառուցվածքների զարգացվածության [3]:

Ենթակառուցվածքների զարգացվածությամբ աշխարհում առաջին քաղաք-պետությունը Սինգապուրն է, որն, իսկապես, զարմանալի չէ, քանի որ վարկանիշավորման մի շարք համակարգերում Սինգապուրն առաջատարների շարքում է: Եվ չնայած, որ կյանքի որակով աշխարհի 50 առաջատար քաղաքների շարքում Սինգապուրն ընդամենը 25-րդն է, այնուամենայնիվ այն ունի ամենազարգացած ենթակառուցվածքները: Այսինքն՝ ենթակառուցվածքների կառավարման բնագավառում պետք է ուսումնասիրել և ներդնել Սինգապուրի փորձը՝ լինի դա էլեկտրոնային կառավարման բնագավառում, գործարարության կազմակերպման, մրցունակության բարձրացման, ֆինանսների կառավարման հարցերում, քանի որ աշխարհի շատ երկրներ են այժմ փորձում հետևել Սինգապուրի օրինակին [4]:

Տնտեսական ազատության համաթիվը (Index of Economic Freedom) [5] հաշվարկվում է Wall Street Journal-ի և Heritage Foundation-ի կողմից: Համաթիվը կառուցվում է 4 հենասյուների և 12 հիմնական բաղադրիչների վրա.

- օրենքի գերակայություն,
- պետության չափ,
- կարգավորումների արդյունավետություն,
- բաց շուկաներ:

Համաթիվը չափվում է 0-100 սանդղակով:

### Աղյուսակ 1

#### Համաշխարհային տնտեսական ազատության բաշխումը

100-80	79.9-70	69.9-60	59.9-50	49.9-0	տ/չ
Ազատ	Հիմնականում ազատ	Համարյա ազատ	Հիմնականում ոչ ազատ	Ազատություն չունեցող	Չվարկանիշավորված

Դատելով Հայաստանի ցուցանիշներից՝ 47-րդ հորիզոնական, կարելի է եզրակացնել, որ մեր երկիրը դասվում է համարյա ազատ երկրների շարքին՝ 67.7 վարկանիշով և շատ մոտ է հաջորդ խումբ անցնելուն, այսինքն՝ հիմնականում ազատ երկրների կազմում ընդգրկվելուն, որը բավականին ողջունելի փաստ է [5]:

Տնտեսական ազատության համաթիվում Հայաստանի վարկանիշի անկումը մեծամասամբ պայմանավորված է կառավարման ինտեգրացվածության և դատական համակարգի արդյունավետության ցածր վարկանիշերով՝ 38.6 և 46.3 միավոր: Այսինքն՝ կարելի է այս ցուցանիշների ուսումնասիրությունից եզրակացնել, որ բարեփոխումների տրամաբանությունը

ծիշտ է կառուցվում, որն էլ հետագայում կհանգեցնի Հայաստանի դիրքերի բարելավման:

Տնտեսական ազատության համաթվով աշխարհում երեք առաջատար երկրներն են՝ Հոնկոնգը (90.2 միավոր), Սինգապուրը (89.4 միավոր) և Նոր Զելանդիան (84.4 միավոր) [5]:

Իհարկե, տնտեսական ազատությունը երկրի զարգացման հնարավորությունների լայն դաշտ է ստեղծում, ինչպես նաև սահմանում է տնտեսական մի շարք բաղադրիչների մասով հասկանալի և ընդունելի խաղի կանոններ՝ համաշխարհային բիզնես հասարակության համար:

Սկսած 1990 թվականից՝ ՄԱԿ-ի կողմից հաշվարկվում է Մարդկային զարգացման համաթիվը (The Human Development Index), որը հաշվի է առնում մարդու զարգացման երեք հիմնական կողմերը՝ կյանքի շարունակականությունը, կրթական մակարդակը և կենսամակարդակը (ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով որպես եկամուտ): Այս համաթվի հաշվարկման մեթոդաբանությունը վերջին 10 տարիների ընթացքում բավականին կատարելագործվել է, քանի որ մարդկային կապիտալի համակողմանի գնահատման անհրաժեշտություն է առաջացել: Այստեղ կարևորագույն հարցադրումների շարքին են սկսել դասվել՝ առողջության անհավասարության, եկամտային անհավասարության, գենդերային անհավասարության, կլիմայի փոփոխության և մարդկային զարգացվածության փոխկապվածությունները և այլն:

Այս համաթվով 2018 թ.-ին Հայաստանն ընդգրկված է երրորդ խումբ երկրների կազմում և զբաղեցնում է 81-րդ տեղը: Կյանքի սպասվող տևողությունը 74.9 տարի (կանայք՝ 78.4, տղամարդիկ՝ 71.2), իսկ մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ) 2011թ.-ի գնողունակությամբ՝ 9277 դոլար: Կարելի է ասել, ՀՀ-ն ունի միջին մարդկային զարգացվածության մակարդակից բարձր մարդկային զարգացվածության խումբ անցնելու լիարժեք շանսեր, որտեղ, իհարկե, կբարելավի իր դիրքերը [6, p. 301]:

Մարդկային զարգացվածության համաթվի առաջին տեղում, այսինքն՝ շատ բարձր մարդկային զարգացման խմբում առաջատար երկիրն է Նորվեգիան՝ 0.954 ցուցանիշով, որին հաջորդում են՝ Շվեյցարիան և Իռլանդիան:

Մեկ շնչին ընկնող ՀԱԵ-ի ցուցանիշով, որը հաշվարկված է համարժեքային գնողունակության պարիտետով (2011թ. PPP), 2018 թվականին առաջին տեղում է գտնվել Կատարը՝ 110 հազար ԱՄՆ դոլար, իսկ երրորդ տեղում՝ Լիխտենշտեյնը՝ 99 հազար ԱՄՆ դոլար ցուցանիշով: Իսկ կյանքի սպասվող տևողությամբ 84.7 տարի ցուցանիշով առաջին հորիզոնականում է Հոնկոնգը, որին 84.5 տարով հաջորդում է Ճապոնիան [6, p. 300]:

Իհարկե, մարդկային զարգացվածության համաթիվը բաժանելով ըստ զարգացած և զարգացող երկրների ունի՝ որոշակի նպատակահարմարություն, և այս բաժանումը նաև որոշակի սանդղակ է զարգացող երկրից զարգացած երկիր կոչվելու պատվին արժանանալու համար, քանի որ վերջնական արդյունքում, զարգացող երկրներում մարդկային ցածր զարգացվածությունն ուղեկցվում է նաև մարդկային աղքատությամբ, և կան մեծ դժվարություններ՝ աղքատության կրճատման, օրական ծախսվող դրամական միջոցների ավելացման, ինչպես նաև աղքատության շեմից կամ գծից ցածր գտնվող մարդկանց տեսակարար կշիռը նվազեցնելու համար:

Համաշխարհային տնտեսական համաժողովն առանձին մշակել է երկրների տնտեսական մրցունակության գնահատման համակարգ, որի արդյունքում ամեն տարի հրատարակվում է Մրցունակության համաշխարհային զեկույց: Այդ զեկույցը թողարկվում է՝ սկսած 1979 թվականից և ներառում էր 16 երկիր:

Համաշխարհային մրցունակության համաթիվը (Global Competitiveness Index) [7] հաշվարկվում է Համաշխարհային տնտեսական համաժողովի (World Economic Forum) աշխատակիցների կողմից, որոնք 2019 թթ. համար 141 երկրների համար հերթական անգամ հաշվարկել են այս համաթիվը: Նշենք, որ Համաշխարհային մրցունակության համաթիվը հաշվարկվում է 12 հիմնական տարրերի (հիմնասյունների) համադրման միջոցով, որոնք իրենց հերթին բաղկացած են առանձին ցուցանիշներից:

Հիմնական 12 հիմնասյուններ (տարրեր) են՝

- 1) հաստատություններ,
- 2) ենթակառուցվածքներ,
- 3) մակրոտնտեսական կայունություն,
- 4) առողջապահություն և միջնակարգ կրթություն,
- 5) բարձրագույն կրթություն և վերապատրաստում,
- 6) ապրանքային շուկայի արդյունավետություն,
- 7) աշխատուժի շուկայի արդյունավետություն,
- 8) ֆինանսական շուկայի զարգացվածություն,
- 9) տեխնոլոգիական պատրաստվածություն,
- 10) շուկայի չափը,
- 11) գործարարության զարգացվածությունը,
- 12) նորամուծություններ:

Հայաստանը համաշխարհային մրցունակության համաթիվով 2019-ին գտնվել է 69-րդ հորիզոնականում, իսկ 2008-2009թթ. գտնվում էր 97-րդ տեղում: Ստացվում է, որ գրեթե 30%-ով առանձին ոլորտներում վերջին տաս տարվա ընթացքում առաջընթաց ենք ապահովել: Առավել մանրամասն վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայաստանի մրցունակության համակարգում առկա թերությունները հնարավորություն չեն տալիս ապահովել տնտեսական լուրջ զարգացում, որն, իհարկե, միայն մեր

խնդիրը չէ, իսկ Մրցունակության 2019-ի գեկույցի վերնագրից բխում է, որ աշխարհում վերջին 10 տարում արտադրողականության աճի ապահովման լուրջ խնդիր կա, որից անմասն չի մնացել նաև Հայաստանը [7]:

Մրցունակ տնտեսություններով աշխարհի առաջատարներն են՝ Սինգապուրը, ԱՄՆ-ը և Հոնկոնգը: 2018 թվականին վարկանիշավորման աղյուսակը գլխավորում էր ԱՄՆ-ը, իսկ 3-րդ տեղում է հայտնվել Գերմանիան:

Մեր հարևան երկրներից Վրաստանը գտնվում է 74-րդ տեղում, Ադրբեջանը՝ 58, Իրանը՝ 99, իսկ Թուրքիան՝ 61 [7]:

Հայաստանն իր մրցակցային առավելությունների ավելացման քաղաքականությունը պետք է կառուցի ոչ միայն իր վարկանիշի բարելավման և դրանով բավարարվելու, այլ նաև առաջին հերթին հարևան երկրների հանդեպ մրցակցային առավելություններ ստանալու սկզբունքային մոտեցման հիմքերից ելնելով:

Ձեռնարկատիրական միջավայրի գնահատումն իրականացվում է տարբեր ցուցանիշների և համաթվերի միջոցով: Սակայն այս կամ այն երկրի ձեռնարկատիրական գործունեության վարման ազատությունն (ՁԳՎԱ) առավել ընդհանրական ձևով է բնութագրում Doing Business [8] ամենամյա ժողովածուի մեջ, Համաշխարհային բանկի կողմից առաջարկվող համաթիվը, որը հաշվարկվել է 190 երկրների համար:

Համաշխարհային բանկը հրապարակել է իր ամենամյա, հերթական «Doing Business 2020» («Գործարարության իրականացման մատչելիությունը 2020») հետազոտությունը, որում ուսումնասիրվել և գնահատվել է աշխարհի 190 երկրներում գործարար միջավայրը և բիզնես իրականացնելու մատչելիությունը: «Doing Business» հետազոտության նպատակն է՝ բացահայտել աշխարհի տարբեր երկրներում գործարար միջավայրը կարգավորող այն ոլորտները, որտեղ առկա են բիզնեսի իրականացման լուրջ խոչընդոտներ և անհրաժեշտ են լուրջ բարեփոխումներ [8]:

Այս համաթիվով Հայաստանը զբաղեցնում է 47-րդ հորիզոնականը, իսկ աշխարհի առաջատարն է Նոր Զելանդիան, երկրորդ հորիզոնականում է՝ Սինգապուրը [8]:

Իհարկե, կարևոր է նաև նշել, որ Հայաստանում ամենավատ վիճակում էր մոտ 10 տարի առաջ գտնվում հարկերի վճարման համակարգը 153-րդ տեղում, իսկ այժմ այն՝ 52-րդ տեղում է: Լուրջ խնդիրներ կան մինորիտար ներդրողների պաշտպանության (120-րդ հորիզոնական) և դատական համակարգի ու սնանկացման ինստիտուտի, ինչպես նաև գործարար բնագավառում առկա վեճերի լուծման հարցում (95-րդ հորիզոնական): Դրական դիրքեր ունենք գործարարություն սկսելու (10-րդ հորիզոնական) և սեփականության իրավունքների գրանցման (13-րդ հորիզոնական) բնագավառներում [9]:

Իհարկե, այս ոլորտներից յուրաքանչյուրում կան առանձնացված խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Սակայն գործարար միջավայրի վարկանիշային բարելավումը պետք է նաև ուղեկցվի ներդրումների ներհոսքով, իսկ վերջինիս վրա ազդում են ոչ միայն առանձին համաթվի ցուցանիշները, այլ նաև մի շարք աշխարհատնտեսական ու աշխարհաքաղաքական գործոններ:

Այսպիսով՝ համաաշխարհային հեղինակավոր կազմակերպությունների կողմից տվյալ երկրի տնտեսության այս կամ այն ոլորտում անցկացված հետազոտությունները և տրված համաաշխարհային վարկանիշավորման դասակարգումները կարող են մեծ դեր խաղալ տվյալ երկրի տնտեսության զարգացման գործում, որովհետև՝ եթե երկիրն ունի դրական ցուցանիշների համակարգում բարձր վարկանիշ, ապա կարող է ազդել և՛ ներդրումների ներգրավման, և՛ տվյալ տնտեսության վերաբերյալ ձևավորվող կարծիքի, և՛ հատկապես վստահության բարձրացման վրա: Հակառակ պարագայում տնտեսությունը հայտնվում է «սև ցուցակում», որը բացասական է այնքանով, որքանով տվյալ երկիրը զրկվում է տնտեսական լայն համագործակցության շրջանակներից: Իսկ դրական է այնքանով, որքանով ահագանգ է դիտվում պետական կառավարման մարմինների և բարեփոխումներ իրականացնող ինստիտուտների համար: Նրանք պետք է առավել մեծ ջանքեր գործադրեն, ինչպես նաև փորձեն ուսումնասիրել միջազգային փորձը և ձգտեն հասնել վարկանիշի բարելավման՝ համակարգային և կառուցվածքային բարեփոխումների, նորագույն տեխնոլոգիաների ներդրման և կատարելագործման միջոցով:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Corruption perceptions index 2019, Transparency International 2020, [www.transparency.org/cpi](http://www.transparency.org/cpi), 34 p. (Last accessed: 08.03.2020).
2. Bribe Payers Survey 2011, Transparency International's Bribe Payers Index 2011, 32 p. [https://www.transparency.org/whatwedo/publication/bpi\\_2011](https://www.transparency.org/whatwedo/publication/bpi_2011), (Last accessed: 08.03.2020).
3. <https://mobilityexchange.mercer.com/Insights/quality-of-living-rankings> (Last accessed: 08.03.2020).
4. <https://www.statista.com/statistics/264753/ranking-of-countries-according-to-the-general-quality-of-infrastructure/> (Last accessed: 08.03.2020).
5. <https://www.heritage.org/index/ranking> (Last accessed: 08.03.2020).
6. Human Development Report 2019, Beyond income, beyond averages, beyond today: Inequalities in human development in the 21st century, 336 p. <http://hdr.undp.org/sites/default/files/hdr2019.pdf> (Last accessed: 08.03.2020).
7. The Global Competitiveness Report 2019, Klaus Schwab, World Economic Forum 666 p. [http://www3.weforum.org/docs/WEF\\_TheGlobalCompetitivenessReport2019.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf) (Last accessed: 08.03.2020).
8. Doing Business 2020, Comparing Business Regulation in 190 Economies, 149 p. <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/32436/9781464814402.pdf> (Last accessed: 08.03.2020).
9. <https://www.doingbusiness.org/en/data/exploreeconomies/armenia> (Last accessed: 08.03.2020).

---

## ИНДЕКСЫ ЭКОНОМИЧЕСКОГО РЕЙТИНГИРОВАНИЯ И ИХ МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ

ВИЛЕН ХАЧАТРЯН

---

*Академия государственного управления Республики Армения*

---

В статье рассматриваются индексы восприятия коррупции, качества жизни, экономической свободы, человеческого развития, бедности и т.д. Проанализировав эти индексы, мы можем констатировать, что во многих случаях развитие экономики основывается на ее рейтингах в мировой экономике. Для благоприятных результатов представители власти и учреждения, осуществляющие реформы должны внедрять больше усилий для изучения международного опыта и упорнее стремиться достижению высокого рейтинга с помощью системных и структурных реформ.

**Ключевые слова:** восприятие коррупции, качество жизни, экономическая свобода, человеческое развитие, индекс бедности, глобальная конкуренция, оценка предпринимательской среды.

## ECONOMIC RANKING INDEXES AND THEIR METHODOLOGICAL BASES

VILEN KHACHATRYAN

---

*Public Administration Academy of the Republic of Armenia*

---

The article deals with the perception of corruption index, quality of life index, economic freedom index, human development index, poverty index, global competitiveness index, etc. After analyzing these indexes, we can state that in many cases the development of the economy is based on its rankings in the global economy. For better results, the state government bodies and especially the institutions, which implement the reforms, should study the international experience and strive to improve the ranking through systematic and structural reforms.

**Keywords:** perception of corruption, quality of life, economic freedom, human development, poverty index, global competitiveness, evaluation of the enterprise environment.

*Ներկայացվել է խմբագրություն 09.03.2020  
Երաշխավորվել է տպագրության 06.04.2020*